

Պ-475-12.02.2020,25.05.2020-ՊԻ-011

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածում՝

- 1) 2-րդ մասի 4-րդ կետից հանել «Սահմանադրության փոփոխությունները,» բառերը:
- 2) 2-րդ մասը լրացնել 4.2) կետով հետևյալ խմբագրությամբ. «Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում հրապարակում է Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները. »:

Հոդված 2. Օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենքի 86-րդ հոդվածում 7-րդ մասից հանել «ուղարկում է Հանրապետության նախագահին, որը ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում և» ու «այն» բառերը:

Հոդված 4. Օրենքի 134-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի վերջում ավելացնել նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Թեկնածուների առաջադրման փաստաթղթերն Ազգային ժողովի նախագահին, իսկ Կանոնակարգով նախատեսված դեպքերում իրավասու մշտական հանձնաժողովի նախագահին են ներկայացվում Աշխատակազմի միջոցով:»

2) 2-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:

3) 6-րդ մասի վերջում ավելացնել նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Աշխատակազմը իրավասու անձի պահանջով նրան տրամադրում է թեկնածուի առաջադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:»

4) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Եթե թեկնածուի առաջադրման փաստաթղթերը Սահմանադրության կամ օրենքի պահանջներին՝

1) համապատասխանում են, ապա դրանք ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան թեկնածուի առաջադրման ժամկետը լրանալը, Աշխատակազմը գրանցում և Ազգային ժողովի նախագահին, իսկ Կանոնակարգի 145-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահին է տրամադրում թեկնածուի անձնական գործը.

2) չեն համապատասխանում, ապա դրանք ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան թեկնածուի առաջադրման ժամկետը լրանալը, Աշխատակազմը իրավասու անձին տեղեկացնում է այդ մասին՝ առաջարկելով մինչև թեկնածուի առաջադրման ժամկետը լրանալը ուղղել փաստաթղթերում առկա ձևական սխալները, իսկ փաստաթղթերի ցանկն ամբողջական չլինելու դեպքում՝ համալրել այդ ցանկը: Եթե

սահմանված ժամկետում թեկնածուի առաջադրման փաստաթղթերը Սահմանադրության կամ օրենքի պահանջներին չեն համապատասխանեցվում, ապա Աշխատակազմն անհապաղ այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին, իսկ Կանոնակարգի 145-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահին:»

5) Ավելացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.

«8. Թեկնածուների անձնական գործերը ստանալուց հետո՝ 24 ժամկա ընթացքում, Կանոնակարգի 136-138-րդ և 141-144-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում՝ Ազգային ժողովի նախագահը, իսկ Կանոնակարգի 145-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը հանդես են գալիս թեկնածուների առաջադրման մասին հայտարարությամբ»

6) Ավելացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

« 9. Թեկնածուն կարող է ինքնաբացարկ հայտնել մինչև Ազգային ժողովի նիստում տվյալ պաշտոնում ընտրության հարցի քննարկման ժամանակ եզրափակիչ ելույթների ավարտը:»

Հոդված 5. Օրենքի 135-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը ձանաչել ուժը կորցրած:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Եթե Կանոնակարգով այլ բան նախատեսված չէ, ապա պաշտոնում ընտրելու կամ նշանակելու մասին հարցերը պարտադիր քննարկման ենթակա են Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում կամ կարող են Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում կամ նիստում քննարկվել հետևյալ դեպքերում.

1) թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց հետո, եթե թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավասություն ունեն երկու կամ ավելի թվով մարմիններ և առնվազն մեկ թեկնածու առաջադրվել է .

2) թեկնածուի առաջադրումից հետո, եթե թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավասություն ունի մեկ մարմին:»

Հոդված 6. Օրենքի 136-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը ձանաչել ուժը կորցրած:

2) 5-րդ մասի «Հարցը» բառը փոխարինել «Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:

Հոդված 7. Օրենքի 137-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը ձանաչել ուժը կորցրած:

2) 6-րդի մասի «հարցը» բառը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:

Հոդված 8. Օրենքի 138-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը ձանաչել ուժը կորցրած:

2) 8-րդ մասի «հարցը» բառը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:

Հոդված 9. Օրենքի 139-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասի «հոդվածով» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասով» բառերով:

2) 9-րդ մասի «հոդվածով» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասով» բառերով:

Հոդված 10. Օրենքի 141-րդ հոդվածում՝

- 1) 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:
- 2) 6-րդ մասում «հարցը» բառից հետո լրացնել «Ազգային ժողովի նիստում» բառերը, ինչպես նաև հանել «, թեկնածուի առաջադրումից հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում»:

Հոդված 11. Օրենքի 142-րդ հոդվածում՝

- 1) 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:
- 2) 5-րդ մասի՝
 - 1) «հարցը» բառը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:
 - 2) «, թեկնածուի առաջադրումից հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում» բառերը հանել:

Հոդված 12. Օրենքի 143-րդ հոդվածում՝

- 1) 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:
- 2) 5-րդ մասից հանել «, թեկնածուների առաջադրումից հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում» բառերը:

Հոդված 13. Օրենքի 144-րդ հոդվածում՝

- 1) 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:
- 2) 6-րդ մասի՝
 - 1) «հարցը» բառը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:
 - 2) «, թեկնածուների ներկայացման ժամկետը լրանալուց հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում» բառերը հանել:

Հոդված 14. Օրենքի 145-րդ հոդվածում՝

- 1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց և առնվազն մեկ թեկնածու առաջադրվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու մասին հարցը քննարկվում է իրավասու մշտական հանձնաժողովի առաջիկա հերթական նիստում կամ կարող են քննարկվել հանձնաժողովի արտահերթ նիստում: Իրավասու մշտական հանձնաժողովն Ազգային ժողովին է առաջարկում սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձի մեկ թեկնածու: Հարցի քննարկման ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում, իրավասու մշտական հանձնաժողովի նախագահն Ազգային ժողովի նախագահին է ուղարկում հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքը:»

- 2) 6-րդ մասի՝
 - 1) «Թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավասու մշտական հանձնաժողովն Ազգային ժողովին է առաջարկում սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձի թեկնածու:» նախադասությունը հանել:
 - 2) 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Եթե սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում իրավասու մշտական հանձնաժողովն Ազգային ժողովին թեկնածու չի առաջարկվում, ապա դրանից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնում կարող են առաջադրվել նոր թեկնածուներ:»
- 3) 7-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

4) 8-րդ մասի՝

- 1) «հարցը» բառը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:
- 2) «, թեկնածուի առաջարկման օրվան հաջորդող Ազգային ժողովի հերթական նիստերում» բառերը հանել:

Հոդված 15. Օրենքի 146-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ.

«1. Օրենքով ստեղծված ինքնավար մարմնի անդամի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն այդ օրենքով նախատեսված մարմինները: Թեկնածուն առաջադրվում է Ազգային ժողովի նախագահին ուղղված գրավոր դիմումով: Դիմումին կցվում են օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը: Օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում Ազգային ժողովի նախագահը թեկնածուի առաջադրման փաստաթղթերը երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է իրավասու մարմնին՝ նշելով պատճառների մասին:»

- 2) Ավելացնել 4-րդ մաս.

«4. Ինքնավար մարմնի անդամի նշանակման հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով:»

- 3) Ավելացնել 5-րդ մաս.

«5. Ինքնավար մարմնի անդամը նշանակվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:»:

Հոդված 16. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Ազգային ժողովի ընդունած և դեռևս ուժի մեջ չմտած Սահմանադրության փոփոխությունները Ազգային ժողովի նախագահը հրապարակում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պ-475-12.02.2020,25.05.2020-ՊԻ-011/1

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 64-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը ճանաչել ուժը կորցրած 5-րդ հոդվածում

- 3) 2-րդ մասի 4-րդ կետից հանել «Սահմանադրության փոփոխությունները» բառերը:
- 4) 2-րդ մասը լրացնել 4.2) կետով հետևյալ խմբագրությամբ. «Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում հրապարակում է Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները. »:

Հոդված 2. Օրենքի 64-րդ հոդվածում ~~ուժը~~ 2-րդ մասի 5-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենքի 86-րդ հոդվածում 7-րդ մասից հանել «ուղարկում է Հանրապետության նախագահին, որը ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում և» ու «այն» բառերը:

Հոդված 2.4. Օրենքի 134-րդ հոդվածում ի

1) 1-ին մասի վերջում ավելացնել նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Թեկնածուների առաջադրման փաստաթղթերն Ազգային ժողովի նախագահին, իսկ Կանոնակարգով նախատեսված դեպքերում իրավասու մշտական հանձնաժողովի նախագահին են ներկայացվում Աշխատակազմի միջոցով:»

2) 2-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:

3) 6-րդ մասի վերջում ավելացնել նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Աշխատակազմը իրավասու անձի պահանջով նրան տրամադրում է թեկնածուի առաջադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:»

4) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Եթե թեկնածուի առաջադրման փաստաթղթերը Սահմանադրության կամ օրենքի պահանջներին՝

1) համապատասխանում են, ապա դրանք ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան թեկնածուի առաջադրման ժամկետը լրանալը, Աշխատակազմը գրանցում և Ազգային ժողովի նախագահին, իսկ Կանոնակարգի 145-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահին է տրամադրում թեկնածուի անձնական գործը.

2) չեն համապատասխանում, ապա դրանք ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան թեկնածուի առաջադրման ժամկետը լրանալը, Աշխատակազմը իրավասու անձին տեղեկացնում է այդ մասին՝ առաջարկելով մինչև թեկնածուի առաջադրման ժամկետը լրանալը ուղղել փաստաթղթերում առկա ձևական սխալները, իսկ փաստաթղթերի ցանկն ամբողջական չլինելու դեպքում՝ համարել այդ ցանկը: Եթե սահմանված ժամկետում թեկնածուի առաջադրման փաստաթղթերը Սահմանադրության

կամ օրենքի պահանջներին չեն համապատասխանեցվում, ապա Աշխատակազմն անհապաղ այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին, իսկ Կանոնակարգի 145-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահին:»

5) Ավելացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.

«8. Թեկնածուների անձնական գործերը ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Կանոնակարգի 136-138-րդ և 141-144-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում՝ Ազգային ժողովի նախագահը, իսկ Կանոնակարգի 145-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը հանդես են գալիս թեկնածուների առաջադրման մասին հայտարարությամբ»

6) Ավելացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

« 9. Թեկնածուն կարող է ինքնաբացարկ հայտնել մինչև Ազգային ժողովի նիստում տվյալ պաշտոնում ընտրության հարցի քննարկման ժամանակ եզրափակիչ ելույթների ավարտը:»

Հոդված 3.5. Օրենքի 135-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Եթե Կանոնակարգով այլ բան նախատեսված չէ, ապա պաշտոնում ընտրելու կամ նշանակելու մասին հարցերը պարտադիր քննարկման ենթակա են Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում կամ կարող են Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում կամ նիստում քննարկվել հետևյալ դեպքերում.

1) թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց հետո, եթե թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավասություն ունեն երկու կամ ավելի թվով մարմիններ և առնվազն մեկ թեկնածու առաջադրվել է .

2) թեկնածուի առաջադրումից հետո, եթե թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավասություն ունի մեկ մարմին:»

Հոդված 4.6. Օրենքի 136-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

2) 5-րդ մասի «Հարցը» բառը փոխարինել «Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:

Հոդված 5.7. Օրենքի 137-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

2) 6-րդի մասի «հարցը» բառը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:

Հոդված 6.8. Օրենքի 138-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

2) 8-րդ մասի «հարցը» բառը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:

Հոդված 7.9. Օրենքի 139-րդ հոդվածի

1) 7-րդ մասի «հոդվածով» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասով» բառերով:

2) 9-րդ մասի «հոդվածով» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասով» բառերով:

Հոդված 8 10. Օրենքի 141-րդ հոդվածում

- 1) 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:
- 2) 6-րդ մասում «հարցը» բառից հետո լրացնել «Ազգային ժողովի նիստում» բառերը, ինչպես նաև հանել «, թեկնածուի առաջադրումից հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում» և «հարցը քննարկվում է թեկնածուի առաջադրումից հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում,» բառերը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է» բառերով:

Հոդված 9 11. Օրենքի 142-րդ հոդվածում

- 1) 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:
- 2) 5-րդ մասի`
 - 3) «հարցը» բառը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:
 - 4) «, թեկնածուի առաջադրումից հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում» բառերը հանել:

Հոդված 10 12. Օրենքի 143-րդ հոդվածում

- 1) 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:
- 2) 5-րդ մասից հանել «, թեկնածուների առաջադրումից հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում» բառերը:

Հոդված 11 13. Օրենքի 144-րդ հոդվածում

- 1) 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:
- 2) 6-րդ մասի`
 - 3) «հարցը» բառը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:
 - 4) «, թեկնածուների ներկայացման ժամկետը լրանալուց հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում» բառերը հանել:

Հոդված 12 14. Օրենքի 145-րդ հոդվածում

- 1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց և առնվազն մեկ թեկնածու առաջադրվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու մասին հարցը քննարկվում է իրավասու մշտական հանձնաժողովի առաջիկա հերթական նիստում կամ կարող են քննարկվել հանձնաժողովի արտահերթ նիստում: Իրավասու մշտական հանձնաժողովն Ազգային ժողովին է առաջարկում սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձի մեկ թեկնածու: Հարցի քննարկման ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում, իրավասու մշտական հանձնաժողովի նախագահն Ազգային ժողովի նախագահին է ուղարկում հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքը:»

- 2) 6-րդ մասի`
 - 3) «Թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավասու մշտական հանձնաժողովն Ազգային ժողովին է առաջարկում սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձի թեկնածու:» նախադասությունը հանել:
 - 4) 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Եթե սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում իրավասու մշտական հանձնաժողովն Ազգային

ժողովին թեկնածու չի առաջարկվում, ապա դրանից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնում կարող են առաջադրվել նոր թեկնածուներ:»

3) 7-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

4) 8-րդ մասի՝

3) «հարցը» բառը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով:

4) «, թեկնածուի առաջարկման օրվան հաջորդող Ազգային ժողովի հերթական նիստերում» բառերը հանել:

Հոդված 13 15. Օրենքի 146-րդ հոդվածում **ուժի**

1) 1-ին մասը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ.

«1. Օրենքով ստեղծված ինքնավար մարմնի անդամի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն այդ օրենքով նախատեսված մարմինները: Թեկնածուն առաջադրվում է Ազգային ժողովի նախագահին ուղղված գրավոր դիմումով: Դիմումին կցվում են օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը: Օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում Ազգային ժողովի նախագահը թեկնածուի առաջադրման փաստաթղթերը երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է իրավասու մարմնին՝ նշելով պատճառների մասին:»

2) Ավելացնել 4-րդ մաս.

«4. Ինքնավար մարմնի անդամի նշանակման հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով:»

3) Ավելացնել 5-րդ մաս.

«5. Ինքնավար մարմնի անդամը նշանակվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:»:

Հոդված 14 16. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Ազգային ժողովի ընդունած և դեռևս ուժի մեջ չմտած Սահմանադրության փոփոխությունները Ազգային ժողովի նախագահը հրապարակում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-475-12.02.2020-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ (Պ-475¹-12.02.2020-ՊԻ-011/1) ԵՎ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ (Պ-475²-12.02.2020-ՊԻ-011/1) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՈԱԶԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	Կառավարություն	«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ	<p>Հոդված 10. Օրենքի 141-րդ հոդվածում՝</p> <p>2) 6-րդ մասում «հարցը» բառից հետո լրացնել «Ազգային ժողովի նիստում» բառերը, ինչպես նաև հանել «<u>թեկնածուի առաջադրումից հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում</u>» ի «հարցը քննարկվում է թեկնածուի առաջադրումից հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում,» բառերը փոխարինել «հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է» բառերով:</p> <p>Հոդված 16. <u>Եզրակակիչ մաս և անցումային դրույթներ</u></p> <p><u>2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Ազգային ժողովի ընդունած և դեռևս ուժի մեջ չմտած Սահմանադրության փոփոխությունների Ազգային ժողովի նախագահը հրապարակում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:</u></p>	Ընդունվել է	Ընդունվել է

2.	<p>Պատգամավոր Վահագն Հովակիմյան</p>	<p>«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ</p>	<p>Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 64-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը ձևափոխելու և 5-րդ կետը հրապարակելու հոդվածում՝</p> <ol style="list-style-type: none"> 1) <u>2-րդ մասի 4-րդ կետից հանել «Սահմանադրության փոփոխությունները.» բառերը:</u> 2) <u>2-րդ մասը լրացնել 4.2) կետով հետևյալ խմբագրությամբ. «Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում հրապարակում է Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները. »:</u> <p>Հոդված 3. Օրենքի 86-րդ հոդվածում 7-րդ մասից հանել «ուղարկում է Հանրապետության նախագահին, որը ստանալուց հետո՝ քանմեկօրյա ժամկետում, ստորագրում և» ու «այն» բառերը:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Ընդունվել է</p>
----	--	--	--	--------------------	--------------------